



## ԵՄ և ՀԱՅԱՍՏԱՆ. ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ



### ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ՓԱԹԵԹ՝ ՄԻՆԶԵԿ 2020 ԹՎԱԿԱՆԸ ԵՎ ԴՐԱՆԻՑ ՀԵՏՈ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ

Երիտասարդական հեռանկարների բարելավումն ընկած է Եվրոպական միության՝ իր Արևելյան գործընկերների հետ համագործակցության հիմքում: Եվրոպական միությունը Հայաստանի հետ միասին նպատակ ունի նոր հնարավորություններ ստեղծել երիտասարդների ուսման, աշխատանքի, հասարակությունում ամբողջական մասնակցության և սեփական ներուժի իրացման համար: Եվրոպական միությունը 2017-2020թթ. ժամանակահատվածում Արևելյան գործընկերության երիտասարդությանն է ուղղել մոտ **330 մլն եվրոյի** աջակցություն:

**Երիտասարդներին աջակցությունն Արևելյան գործընկերության քաղաքականության առանցքում կմնա նաև 2020 թվականից հետո:**



#### ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՌԻՍՈՒՑՈՒՄ ԵՎ ՇԱՐԺՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ

**Երազմունք:** ԱվԳ տարածաշրջանին 2017 – 2020թթ. ժամանակահատվածի համար 210 միլիոն եվրոյի հատկացում՝ փոխանակման հնարավորություններից օգտվելու հնարավորություն ընձեռնելով շուրջ 80,000 երիտասարդի, երիտասարդական աշխատողի, ուսանողի և դասախոսի: Մասնավորապես՝

- Կրթաթոշակներ՝ Եվրոպայում սովորելու համար.
- Ուսանողական փոխանակումներ.
- Եվրոպական համերաշխության կորպուս.
- Երիտասարդական փոխանակումներ:

- 2014-2019թթ. ժամանակահատվածում ԵՄ ֆինանսավորումը Հայաստանից 2,486 ուսանողի ու դասախոսի հնարավորություն է ընձեռնել սովորել կամ դասավանդել ԵՄ-ում, իսկ 1,255 եվրոպացու՝ սովորելու կամ դասավանդելու Հայաստանում: Մագիստրատուրայում սովորող 55 հայաստանցի ուսանող էլ ստացել են «Երազմունք»-ի ամբողջական կրթաթոշակ:

- 8,329 հայ երիտասարդ և երիտասարդական աշխատող օգտվել են «Երազմունք»-ի փոխանակման ծրագրերից, որոնցից 136-ը ներգրավվել

են երիտասարդներին ու որոշում կայացնողներին ուղղված հատուկ գործողություններում:

**Իթվինիլիզ Պլուս.** հայկական 422 դպրոց ներգրավվել են ուսուցիչների փոխանակման և մասնագիտական զարգացման ծրագրերում: 2020 թվականի դրությամբ, «Իթվինիլիզ Պլուս»-ի միջոցով կապ է հաստատվել ԱվԳ տարածքի ավելի քան 7,700 ուսուցիչների և շուրջ 3,000 դպրոցների միջև:

**Կրաստանի Եվրոպական դպրոց.** 2018 թվականի սեպտեմբերին գործարկված գերազանցության փարոս, որը նախատեսված է ԱվԳ տարածաշրջանի, այդ թվում՝ հայաստանցի աշակերտների համար, ովքեր այստեղ ուսանելու արդյունքում կստանան միջազգայնորեն ճանաչված կրթական աստիճան:

**Կրթություն հանուն աշխատանքի.** 2019-2023թթ. համար 23 միլիոն եվրոյի չափով ԵՄ աջակցություն «STEM» ծրագրին՝ գիտական, տեխնոլոգիական, ճարտարագիտական և մաթեմատիկական կրթության որակի բարելավման նպատակով:



#### ԶԲԱՂԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՁԵՆԱՐԿԱՑԻՐՈՒԹՅՈՒՆ

**EU4Youth.** 43 միլիոն եվրոյի հատկացում ԱվԳ տարածաշրջանին՝ ձեռնարկատիրական ներուժի խթանման և աշխատաշուկայի հնտությունների զարգացման համար՝ բիզնես ինկուբատորների և նորարարական կլաստերների, ձեռնարկատիրական (այդ թվում՝ սոցիալական) կողմնորոշմամբ մենթորային սխեմաների և դպրոցը ժամանակից շուտ լքած անձանց համար ոչ ֆորմալ կրթական ծրագրերի ստեղծման միջոցով: Հայաստանը մասնակցում է 2017-2019թթ. գործարկված **EU4Youth-ի վեց դրամաշնորհային ծրագրի**, որոնք ուղղված են աջակցելու կարիքավոր երիտասարդներին, իսկ հայկական 53 կազմակերպություն էլ մասնակցում են EU4Youth-ի կարողությունների զարգացման փոքր դրամաշնորհային ծրագրերին:

**Մասնագիտական կրթություն և ուսուցում.** 15.2 միլիոն եվրոյի ԵՄ աջակցություն՝ ՀՀ-ում զբաղվածությանը և մասնագիտական կրթությանն ու ուսուցմանն ուղղված հնգամյա (2017-2021թթ.)՝ «Ավելի լավ որակավորումներ՝ ավելի լավ աշխատանքի համար» ծրագրին՝ երկրում աշխատաշուկայի արդյունավետության և աշխատուժի զբաղունակության բարձրացման նպատակով:

**Եվրոպական կրթական հիմնադրամ.** աջակցություն համագործակցությանը՝ երիտասարդների աշխատանքի անցնելուն ուղղված քաղաքականությունների քարտեզագրման միջոցով՝ գործունեության գերակա ուղղությունները սահմանելու և ազգային երիտասարդական ռազմավարություններին աջակցելու համար: Կարդացե՛ք **Հայաստանի մասին զեկույցը:**



#### ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ

2019 թվականի հունիսին կայացած **Արևելյան գործընկերության 4-րդ երիտասարդական ֆորումը** ընկարկում է ունեցել «Քննարկատարական մտածողություն՝ մեղիագրագիտության և ակտիվ մասնակցության միջոցով» թեմայով:

**ԱվԳ Քաղաքացիական հասարակության կրթաթոշակների ծրագիր.** աջակցություն Արևելյան գործընկերության երկրների քաղաքացիական հասարակության առաջնորդներին՝ առաջնորդության և հնտությունների զարգացման հարցում: 2017-2020թթ. ժամանակահատվածում ընտրված **կրթաթոշակառուներից 11-ը եղել են Հայաստանից:**

EU4Youth-ի **Քաղաքացիական հասարակության կրթաթոշակներ երիտասարդների համար.** աջակցություն երիտասարդական կազմակերպություններին և մոտ 460 կրթաթոշակառուներին՝ քաղաքականությունների մշակման ակտիվ մասնակից լինելու հարցում:

**Երիտասարդ Եվրոպական դեսպաններ.** մոտ 700 երիտասարդ Եվրոպական դեսպանները (ԵԵԴ-ներ) «EU NEIGHBOURS east» ծրագրի շրջանակներում նպաստում են ԵՄ-ի և Արևելյան գործընկերության երկրների երիտասարդների ու երիտասարդական կազմակերպությունների միջև համագործակցությանը: Ծանոթացե՛ք **Հայաստանը ներկայացնող 59 ԵԵԴ-ների հետ:**

**Երապակումբները** նպատակ ունեն երիտասարդների շրջանում խթանել և զարգացնել Եվրոպական արժեքները: **ՀՀ մարզերում գործող Եվրոպական կրթական կազմակերպությունների** ցանցը երիտասարդներին տեղեկացնում է կրթում և ԵՄ-ի և ԵՄ-Հայաստան հարաբերությունների մասին, օգնում է գործընկերություն հաստատել Եվրոպական երիտասարդական հասարակական կազմակերպությունների հետ՝ ԵՄ ռեսուրսների նկատմամբ հասանելիություն ստանալու և երիտասարդների՝ ԵՄ-ի հետ կապերն ամրապնդելու ձգտումներին աջակցելու նպատակով:

# ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՁԱՅՆԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

## ԱԳ ԶԱՂԱԶԱՑԻՎԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿԱՌՈՒ




### ՍՈՒՐԵՆ ԳԱՍՏՅԱՆ

ԱԳ Զաղաքացիական հասարակության կրթաթոշակառու

«Կրթաթոշակը յուրօրինակ հարթակ է ստեղծել երիտասարդ առաջնորդների համար՝ իրենց առաջնորդական որակները բարելավելու և սեփական համայնքներում դրական փոփոխություններ իրականացնելու տեսանկյունից»:

## ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿԱՄԱՎՈՐ



### ՎՐԵԺ ՄԱՃԿԱԼՅԱՆ

Եվրոպական կամավորական ծառայություն Աշխատել է Հունգարիայի Սեգեդ քաղաքում

«Սա այն տեղն ու ժամանակ էր, որտեղ ես գտա իմ լավագույնն էր: EVS-ն ի չիք է դարձնում բոլոր սահմանները: Եթե որևէ մեկն ինձ երբևէ հարց տա, թե ինչ է միասնությունը, ես կպատասխանեմ. «Դու այն կարող ես գտնել EVS-ի նախագծերում»»:

## «EU4YOUTH» ԶԲԱՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳԻՐ



### ԱՐԵՎՇԱՏ ՂԱՐԻԲՅԱՆ

«EU4Youth» ծրագրի շահառու

«EU4Youth-ի կյանքի հմտությունների դասընթացն ինձ սովորեցրեց զբաղվել բիզնեսով և միջոցներ տրամադրեց, ինչի շնորհիվ ես կարողացա ձեռք բերել չլրջի արտադրության համար անհրաժեշտ սարքավորում: Այն կյանքի կոչեց իմ երազանքը»:

## «EU4YOUTH» ԶԲԱՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳԻՐ



### ԱԼԼԱ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

«EU4Youth» ծրագրի շահառու

«Ես չգիտեի, որ ծրագիրն այսքան մեծ ազդեցություն կարող է ունենալ իմ կյանքում: Այժմ իմ կյանքում մեծ փոփոխություններ են տեղի ունեցել, փոխվել են իմ մտածելակերպն ու գործելակերպը, և ես հավատում եմ, որ իմ բիզնեսը կաճի և կհաջողի»:

## ԵՐԻՏԱՍԱՐԴ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԵՄՊԱՆ



### ՆԵՆՍԻ ՄԿՐՏՅԱՆ

Երիտասարդ եվրոպական դեմպան՝ Հայաստանից

«ԵՇԴ ցանցն ինձ համար կյանք փոխող փորձառություն է՝ բոլոր առումներով: Բայց ամենալավն այն է, որ ես բացահայտեցի իմ ներուժն ու ընդլայնեցի իմ հորիզոնը՝ երիտասարդների ուժեղ ցանց ձևավորելով ողջ եվրոպայում»:

## ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑ



### ԳԱՅԱՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ

Արևելյան գործընկերության դպրոցի աշակերտ

«Դպրոցն ինձ հնարավորություն ընձեռեց բացահայտել նոր մշակույթներ, նոր մարդկանց, նոր հետաքրքրություններ և նոր ինձ: Այն նպաստեց իմ անձնական աճին և ես ավելի շատ ներգրավվեցի քաղաքացիական մասնակցության գործունեության մեջ»:

## ԻՄԱՆԱԼ ԱՎԵԼԻՆ՝

ԵՄ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻՆ  
[www.euneighbours.eu/en/east/eu-in-action/youth](http://www.euneighbours.eu/en/east/eu-in-action/youth)

«ԵՐԱԶՄՈՒՄ+»  
[www.ec.europa.eu/programmes/erasmus-plus](http://www.ec.europa.eu/programmes/erasmus-plus)

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ «ԵՐԱԶՄՈՒՄ+»-Ի ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ  
[www.erasmusplus.am](http://www.erasmusplus.am)

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ «ERASMUS+ YOUTH» ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
[www.yic.am/en/erasmus-youth-info-centre-armenia/](http://www.yic.am/en/erasmus-youth-info-centre-armenia/)

«ԻԹՎԻՆԻԼԳ ՊԼՅՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆ»  
[www.etwinningplus.amedu.am](http://www.etwinningplus.amedu.am)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ  
[www.etf.europa.eu](http://www.etf.europa.eu)

ԶԱՂԱԶԱՑԻՎԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐ  
[www.fellowships.eapcivilsociety.eu](http://www.fellowships.eapcivilsociety.eu)

